Համաձայնագիր-1
22.10.2019թ. կնքված N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 18 » դեկտեմբերի 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն այսուհետև՝ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով 22.10.2019թ. կնքված N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 3 032 232 (երեք միլիոն երեսուներկու հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամով, այն սահմանելով 101 670 000 (Մեկ հարյուր մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ավելացնելով Պայմանագրի N-1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների ծավալը:

1.2. Փոփոխել գնման Պայմանագրի N-1 Հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ/կցվում է/:

1.3. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.4. 22.10.2019թ. կնքված N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2019 թվականի հոկտեմբերի 22-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

1.5 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	ք. Երևան, Պուշկինի 38/1, 55շ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	
900011028355	1930042785480100
02647057	02588485
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	**Վ.Մերանգուլյան**
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
Հաստատված է
«22» հոկտեմբերի 2019թ. կնքված
N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 գնման պայմանագրի փոփոխությամբ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

CPV-72261110/501

ՀՀ Հարկային օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված ՀՀ ՊԵԿ-ում նոր ենթահամակարգերի ծրագրային ապահովման իրականացման ծառայություններ

Նպատակը

ՀՀ ՊԵԿ-ում ՀՀ Հարկային օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված նոր ենթահամակարգերի ծրագրային ապահովման աշխատանքների ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ

1. Ապահովել ստորև նշված ենթահամակարգերի վերաբերյալ տեխնիկական առաջադրանքների կազմումը, ծրագրավորումը, թեստավորումը, շահագործման հանձնումը և անխափան աշխատանքը՝ համապատասխանեցնելով ՀՀ ՊԵԿ-ից ստացված հանձնարարականներին, պահանջներին և օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև հարկային վարչարարության առանձին դրույթներին.

1. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» նոր հասկացության ավելացում

2020թ. հունվարի 1-ից ներդրվում է միկրոձեռնարկատիրության համակարգ: Միկրո-ձեռնարկատիրության համակարգի շրջանակներում առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, իսկ օրենսգրքի N3 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձինք ազատվում են ԱԱՀ-ով, շահութահարկով և շրջանառության հարկով հարկումից: Ըստ այդմ, պետք է փոփոխություններ կատարվեն և՛ Հարկատու 3 (այսուհետ Հ3), և՛ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերում (այսուհետ ՀՆԷՀ): Կատարվելիք փոփոխություններն են.

1.1. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» համարվելու համար հարկ վճարողը պետք է ներկայացնի հայտարարություն, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է ծրագրավորել նոր փաստաթուղթ, որը հասանելի կլինի և՛ Հ3 համակարգում, և՛ ՀՆԷՀ-ում: Հայտարարության մեջ պետք է հնարավոր լինի նշել թե որ տարվանից է հարկ վճարողը ցանկանում համարվել «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ»: Հայտարարության գրանցման ժամանակ համակարգը պետք է ժամկետային ստուգումներ կատարի, ինչպես նաև ստուգումներ կատարի պետական ռեգիստրի գրանցման ամսաթվի և ներկայացման ամսաթվի միջև, դիտարկի հարկ վճարողի տեսակը, հարկման ռեժիմը, կարգավիճակը ըստ որի համակարգը կստուգի արդյոք հարկ վճարողն իրավունք ունի հանձնել տվյալ հայտարարությունը թե ոչ:

1.2. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ»-ները պետք է հարկային մարմնին ներկայացնեն տարեկան հաշվետվություն, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է ծրագրավորել նոր փաստաթուղթ, որը հասանելի կլինի և՛ Հ3 համակարգում, և՛ ՀՆԷՀ-ում: Հաշվետվության հանձման ժամանակ պետք է ստուգումներ կատարվեն լրացված տվյալների ֆորմատների ճշտության վերաբերյալ: Ինչպես նաև պետք է ստեղծել կապ ներկայացված հայտարարության (Կետ 1.1) և տարեկան հաշվարկի միջև. այսինքն՝ պետք է ստուգում կատարել, որպեսզի հայտարարություն չներկայացրած հարկ վճարողին չթույլատրվի հանձնել տարեկան հաշվարկը:

1.3. Հ3 համակարգի Հաշվետվություններ բաժնի տեղեկատվության հաշվետվություն ենթաբաժնում պետք է ավելացնել նոր փաստաթուղթ՝ Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի հաշվետվություն, որպեսզի հնարավոր լինի excel ձևաչափով արտածել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի տարեկան հաշվետվության տվյալները:

1.4. Ֆիզիկական անձինք կարող են ներկայացնել «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն»: Սույն հայտարարությամբ հարկ վճարողը պետք է համարվի Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ (այնպես ինչպես 1.1 կետում նշված հայտարարության դեպքում): Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է ծրագրավորել նոր փաստաթուղթ, որը հասանելի

կլինի և՛ Հ3 համակարգում, և՛ ՀՆԷՀ-ում: Հայտարարության գրանցման ժամանակ համակարգը պետք է ժամկետային ստուգումներ կատարի, ինչպես նաև դիտարկի հարկ վճարողի տեսակը հարկման ռեժիմը, կարգավիճակը ըստ որի համակարգը կստուգի, արդյոք հարկ վճարողն իրավունք ունի հանձնել տվյալ հայտարարությունը թե ոչ: Ինչպես նաև հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա հանձնել տվյալ հայտարարությունը միանգամից մի քանի տարվա համար:

1.5. Վերոնշյալ 2 փաստաթղթերի համար պետք է ՀՆԷՀ-ի «Հաշվետվություններ» բաժնում ստեղծել նոր ենթաբաժին՝ «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ», որտեղ կցուցադրվեն այդ 2 հաշվետվությունները և իրենց գործողության ժամկետները:

1.6. Հարկատու 3 համակարգում առկա է Հարկման ռեժիմներ բաժին, որտեղ ընդգրկված են հետևյալ 4 ռեժիմներով հարկվող հարկ վճարողները՝

- ✓ ԱԱՀ վճարողներ
- ✓ Շրջանառության հարկ վճարողներ
- ✓ Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ
- ✓ Այլ

Քանի որ ավելացել է նոր ռեժիմ «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ», ապա Հարկման ռեժիմներ բաժնում պետք է ավելացնել նոր՝ 5-րդ ենթաբաժին՝ «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» անվանմամբ: Նոր ենթաբաժինը պետք է կատարի հետևյալ ֆունկցիաները.

- ✓ Տվյալների որոնում
- ✓ Արդյունքների ցուցադրում
- ✓ Արդյունքների արտածում excel ձևաչափով
- ✓ Պատմության արտացոլում

1.7. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» ենթաբաժնում (Կետ 1.5) տվյալ հարկ վճարողներին հավաքագրելու համար անհրաժեշտ է հարկման ռեժիմների ձևավորման մեխանիզմում դիտարկել նաև «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» համարվող հարկ վճարողներին: Այսինքն բոլոր այն հարկ վճարողները, որոնք կներկայացնեն վերոնշյալ 2 հայտարարություններից որևէ մեկը (Կետ 1.1, 1.4), պետք է ընդգրկվեն «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» ռեժիմում: Հարկման ռեժիմների ձևավորման մեխանիզմում պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ հարկ վճարողը կարող է մի քանի տարվա համար հանձնել 1 հայտարարություն:

1.8. Քանի որ առկա են այլ հաշվետվական ձևեր, որոնց մեջ առկա է «ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ»-ների վերաբերյալ նշումներ, անհրաժեշտ է բոլոր այդ հաշվետվական ձևերում այդ նշումները փոխարինել «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ»-ով (օրինակ՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն):

1.9. Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում պետք է ավելացնել նշում՝ համարվում եմ Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, որը նշելուց հետո համակարգը պետք է ստուգում կատարի, եթե հարկ վճարողն ունի ներկայացրած Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա եկամտային հարկի դաշտը դարձնել խմբագրելի և թույլ տալ հարկ վճարողին լրացնել համապատասխան եկամտային հարկը:

1.10. Դատարանի վճռի և (կամ) գանգատարկման հանձնաժողովի ընդունած որոշումների հիման վրա հարկային պարտավորությունների և (կամ) դեբետային գումարների մնացորդների փոփոխությունների վերաբերյալ եզրակացության (qq) 9-րդ բաժնում պետք է ավելացնել նոր ռեժիմ՝ «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ», որում նշում կատարելու դեպքում, եզրակացության հանձնումից հետո համակարգը պետք է ԱԱՀ վճարողների ցանկից հանի տվյալ հարկ վճարողին և հնարավորություն ընձեռի հանձնել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, առանց որևէ ժամկետային ստուգման:

1.11. Հարկ վճարողներ էջի «Տվյալներ»-ի բաժնում պետք է ավելացնել նոր հարկման ռեժիմ՝ «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ», որում նշում կատարելու դեպքում, համակարգը պետք է ԱԱՀ վճարողների

ցանկից հանի տվյալ հարկ վճարողին և հնարավորություն ընձեռի հանձնել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, առանց որևէ ժամկետային ստուգման:

1.12. Քանի որ հարկման ռեժիմների փոփոխությունների պատմության վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվում այլ պետական կառույցների, այդ իսկ պատճառով էլ որոշ վեբ ծառայություններում պետք է կատարել փոփոխություններ՝ ավելացնել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ նոր ռեժիմը: Փոփոխություններ պետք է կատարել հետևյալ կառույցների հետ տվյալների փոխանակման վեբ ծառայություններում.

- ✓ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ
- ✓ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն
- ✓ ԱՔՌԱ

2. Պետական տուրք

2020թ. հունվարի 1-ից կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող հետևյալ գործունեության տեսակներ իրականացնելու համար պետք է ներկայացնեն համապատասխան հայտարարություն, վճարեն պետական տուրք և ստանան արտոնագիր: Արտոնագիր ստանալու համար կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պետք է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև այդ ամսվան նախորդող ամսվա վերջինը օրը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնեն վերոնշյալ գործունեությունն իրականացնելու վերաբերյալ հայտարարություն՝ նշված ժամկետում վճարելով նաև պետական տուրքի գումարները: Գործունեությունը նոր սկսելու դեպքում կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Հայտարարությունը հարկային մարմին են ներկայացնում մինչև գործունեությունն իրականացնելու օրվան նախորդող օրը՝ անկախ այդ օրվա աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր լինելու հանգամանքից: Հայտարարություն ներկայացրած կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին հայտարարությունում նշված գործունեության տեսակի մասով հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով տրամադրում է արտոնագիր: Տվյալ փոփոխության ծրագրային ապահովումը կատարելու համար անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել ՀՅ և ՀՆԷՀ համակարգերում:

2.1. Պետք է ստեղծել նոր հայտարարության ձև, որը հասանելի կլինի և՛ ՀՅ համակարգում, և՛ ՀՆԷՀ-ում: Հայտարարության մեջ հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա լրացնել թե որ ժամանակաշրջանի դեպքում է հարկվելու պետական տուրքով, որ գործունեության տեսակի համար: Հայտարարության գրանցման ժամանակ համակարգը պետք է կատարի ստուգումներ, մասնավորապես ներկայացված են մի քանի ստուգումներ.

- ✓ Պետք է կատարել հայտարարության հանձման ժամկետային ստուգումներ
- ✓ Հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա 2-րդ և ավելի անգամ հայտարարություն ներկայացնելու ժամանակ նվազեցնել կամ ավելացնել ելակետային տվյալները:
- ✓ Այն դեպքում, երբ հարկ վճարողն ընտրել էր Ավտոբուսով ուղևորափոխադրում գործունեության տեսակը, ապա հաջորդ հայտարարության ներկայացման ժամանակ, հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա կատարել ավտոբուսի փոփոխություն: Սակայն պետք է հաշվի առնել, որ նստատեղերի քանակը չպետք է ավել լինի նախորդ հայտարարությունում ներկայացված քանակից
- ✓ Հայտարարության հանձնումից հետո համակարգը պետք է հայտարարությունից բացի գեներացնի նաև արտոնագրի ՊԴՖ

2.2. ՀՆԷՀ-ում պետք է ավելացնել նոր բաժին՝ «Պետական տուրք», որը պետք է կատարի հետևյալ ֆունկցիաները.

- ✓ Տվյալների որոնում
- ✓ Արդյունքների ցուցադրում

2.3. ՀՅ համակարգի «Փաստաթղթեր»-ում պետք է ավելացնել նոր բաժին՝ «Պետական տուրքի գրանցամատյան», որը բաղկացած կլինի 2 ենթաբաժնից՝ որը կունենա 2 ենթաբաժին՝ «Պետական տուրքի գրանցամատյան» և

- ✓ Տվյալների որոնում
- ✓ Արդյունքների ցուցադրում
- ✓ Արդյունքների արտածում excel ձևաչափով

«Ինքնազբաղվածների պետական տուրք» ենթաբաժնում պետք է ցուցադրվեն «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության» արդյունքում ձևավորված արտոնագրերը:

2.4. Պետք է ստեղծել նոր հարկատեսակ՝ «Պետական տուրք», որի մարումները կատարվելու են ոչ թե միասնական հաշվով, այլ առանձին հաշվեհամարով:

2.5. Պետական տուրք հարկատեսակի ավելացման հետևանքով պետք է կատարել փոփոխություն, որը ազդեցություն կթողնի ՀՅ համակարգի ստորև նշված էջերում.

2.5.1. ԱՀՔ ենթահամակարգում պետք է կատարել հետևյալ փոփոխությունները

- Ավելացնել պետական տուրք և պետական տուրք 10% հարկատեսակների անձնական հաշվի քարտեր, որոնք պետք է գործեն սկսած սահմանված ամսաթվից:
- Իրականացնել համապատասխան հայտարարության, վճարման փաստաթղթի և ստուգման ակտի Փոստինգի գործառույթները:
- Սահմանել տույժերի հաշվարկման, ճշգրտման, ջնջելու մեխանիզմները:
- Նախատեսել պարտավորությունների ավելացում և պակասեցում, գերավճարի պակասեցում և ավելացում գործողությունների իրականացումը «ԱՀՔ տվյալների մշակում» էջում:
- Նախատեսել հաշվանցում և վերադարձ գործողությունների իրականացումը ԱՀՔ հաշվանցում/վերադարձ էջում:
- Իրավական վարույթների համակարգում դիտարկել տվյալ հարկատեսակը
- Ավելացնել նշված հարկատեսակները հետևյալ էջերում
- ՀՅ-ի ԱՀՔ (31.12.2017թ.)-ԱՀՔ դիտում էջում
- ՀՅ-ի Հաշվետվություններ/ԱՀՔ մնացորդը/ԱՀՔ մնացորդը մինչև 31.12.2017թ.էջում
- ՀՅ-ի Ապառքացուցակի հաշվետվություն 31.12.2017թ.էջում
- ՀՆԷՀ հարկային պարտավորությունների բաժնում

2.6. Գանձապետարանի հետ հարկերի մարման հետ կապված տվյալների փոխանակման վեբ ծառայությունում պետք է դիտարկել նաև «պետական տուրք» նոր հարկատեսակը:

2.7. Ստուգման ակտում պետք է դիտարկել «պետական տուրք» նոր հարկատեսակը:

2.8. Որոշ այլ փաստաթղթերում կկատարվեն փոփոխություններ, քանի որ այդ հաշվետվություններում առկա են արտոնագրային հարկին վերաբերող տողեր, նշումներ, որոնք պետք է հեռացնել կամ փոխարինել պետական տուրքով:

3. ԱԱՀ հաշվարկի ձևի փոփոխություն

ԱԱՀ հաշվարկի ձևում իրականացվել են որոշ փոփոխություններ, որի հետևանքով անհրաժեշտ է ստեղծել նոր հաշվարկի ձև (նոր doc code): Հաշվարկում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Նոր աղյուսակի ավելացում՝ «Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների»: Աղյուսակի ճիշտ լրացումն ապահովելու համար պետք է ավելացնել նոր ստուգումներ,
- Տվյալ աղյուսակում լրացված տվյալները պետք է արտացոլվեն նաև ՀՅ համակարգի հարկ վճարողներ էջի «Ոլորտ» բաժնում,
- Ակցիզային հարկի հաշվարկման աղյուսակից որոշ սյուների հեռացում,
- Ակցիզային հարկի հաշվարկման բանաձևերի փոփոխություն (որը պետք է իրականացնել նաև ԵՏՄ հայտարարագրերում):
- ՀՅ համակարգի «Հաշվետվություններ» բաժնի «Տեղեկատվության հաշվետվություն» ենթաբաժնում պետք է

4. Նոր հայտարարություն՝ «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն»:

Հանրային սննդի ոլորտում աշխատող հարկ վճարողների համար ստեղծվել է նոր հայտարարություն, որը հարկ վճարողները կարող են հանձնել էլեկտրոնային եղանակով: Ըստ այդմ պետք է փոփոխություններ կատարվեն և՛ Հ3, և՛ ՀՆԷՀ համակարգերում, որի համար անհրաժեշտ է՝

- Նոր հայտարարության ավելացում ՀՆԷՀ –ում և Հ3-ում (նոր doc code), որում պետք է ընդգրկվեն ստուգումներ ժամկետների և հարկման ռեժիմների հետ կապված,
- Հարկման ռեժիմների ձևավորման մեխանիզմում պետք է դիտարկել նաև տվյալ հայտարարությունը, այսինքն եթե հարկ հարկ վճարողը ներկայացնում է տվյալ հայտարարությունը, ապա պետք է համարվի շրջանառության հարկ վճարող (հանրային սննդի ոլորտում)
- Հարկման ռեժիմների էջում պետք է դիտարկել նաև տվյալ հայտարարությունը, ռեժիմների փոփոխության պատճառները հստակ ձևավորելու համար:
- Հարկ վճարողը կարող է տարվա ընթացքում հանձնել տվյալ հայտարարությունը, նույնիսկ եթե հանդիսանում է ԱԱՀ վճարող, հետևաբար պետք է ԱԱՀ վճարողների ցանկից հեռացնել տվյալ հարկ վճարողին: Համակարգում պետք է նախատեսել նոր գործառույթ, ըստ որի հարկ վճարողը կարող է տարվա ընթացքում դուրս գալ ԱԱՀ վճարողների ցանկից:
- Շրջանառության հարկի հաշվարկում պետք է ավելացնել ստուգում, ըստ որի հարկ վճարողը պետք է կարողանա հանձնել հաշվարկը, եթե տվյալ տարվա համար ներկայացրել է «Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն»:

5. Սոցիալական վճարի հավարկման դրույքաչափերի փոփոխություն

Ըստ նոր օրենսգրքի 2021թ. համար սոցիալական վճարը հաշվարկվելու է 3.5 տոկոս դրույքաչափով, եթե աշխատավարձի ամսական չափը չի գերազանցում 500 000 դրամը, իսկ եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500 000 դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվելու է 10 տոկոսի և 32500 դրամի տարբերության չափով (որի դեպքում կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 32500 դրամը): 2022թ. համար սոցիալական վճարը հաշվարկվելու է 4.5 տոկոս դրույքաչափով, եթե աշխատավարձի ամսական չափը չի գերազանցում 500 000 դրամը, իսկ եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500 000 դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվելու է 10 տոկոսի և 27500 դրամի տարբերության չափով (որի դեպքում կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 27500 դրամը):

Վերոնշյալից ելնելով համակարգում պետք է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Համակարգում պետք է նախատեսել սոցիալական վճարի հաշվարկման նոր բանաձևեր, որի հետևանքով սոցիալական վճարի հաշվարկման մեխանիզմում պետք է ավելացնել նոր հոսք , որը պետք է իրականցվի մյուս հոսքերին զուգահեռ:
- Նման փոփոխությունը ազդեցություն կունենա նաև ՀԿԴ-ի հետ տվյալների փոխանակման մոդուլի վրա: Յուրաքանչյուր հոսքի համար ձևավորվում է սոցիալական վճարի առավելագույն սահմանաչափը հաշվարկող, տվյալները հավաքագրող և տվյալները ՀԿԴ ուղարկող մեխանիզմ, և յուրաքանչյուր սոցիալական վճարի դրույքաչափի փոփոխության դեպքում պետք է հաշվի առնել մյուս հոսքերը, նաև պահպանելով՝ սոցիալական վճարի առավելագույն սահմանաչափը և ՀՏԳ-ները:

- Դրույքաչափի փոփոխությունը ազդեցություն է ունենալու նաև տարեկան սոցիալական վճարի հաշվարկման մեխանիզմի վրա, քանի որ դրույքաչափը փոփոխվում է սոցալական վճարի ամսական հոսքում, իսկ տարեկան հոսքի դրույքաչափը մնում է նույնը, սակայն տարեկան կտրվածքով առավելագույն սահմանաչափը հաշվակվում է ըստ ամսական վճարված և տարեկան վճարված սոցիալական վճարների գումարների հիման վրա:
- Վերոնշյալ փոփոխությունը ազդեցություն կունենա հետևյալ մոդուլների վրա

✓ ՀԿԴ-ի հետ տվյալների փոխանակման մոդուլի

✓ Տվյալների սուբյեկտներ մոդուլ

✓ ԱՀ քաղվածի մոդուլ

✓ ԱՀՏՊ մոդուլ

- Պետք է փոփոխություններ կատարել նաև ստորև ներկայացված հաշվարկներում առկա սոցիալական վճարի դաշտի հաշվարկման մեջ

✓ Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ

✓ Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկ

«6. ԱՀՔ-ում պարտավորությունների մարման հաջորդականության փոփոխություն

Օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ փոփոխության է ենթարկվելու ԱՀՔ ենթահամակարգը և պարտավորությունների մարման հաջորդականությունը: Մասնավորապես՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները նախ մարվում են համապատասխանաբար՝ տվյալ հարկատեսակի դեբետային գումարների հաշվին, ինչպես նաև մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարներից և դեբետային գումարներից, ապա միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Մարումներն իրականացվում են սույն մասում նշված գումարների առկայության օրով»:

2. Բացառություններ

Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:
- Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը:
- Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.

1. Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:
2. Ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:
3. Ծրագրային կոդը կպարունակի ողջ տեղեկատվությունը՝ ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ
1. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ի կողմից կատարողի հետ կնքվելու է երկկողմանի պայմանագիր:2.
2. Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Այյունեթվորքս» ՍՊԸ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55շ. «Կոնվերս բանկ» ՓԲԸ
900011028355 02647057 ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	1930042785480100 02588485 «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	**Վ.Մերանգուլյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
Հաստատված է
«22» հոկտեմբերի 2019թ. կնքված
N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/2 գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Չ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. Դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվինք, ըստ ամիսների՝ ընդ որում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը	Ընդամենը Տարի
ՀՀ Հարկային օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված ՀՀ ՊԵԿ-ում նոր ենթահամակարգերի ծրագրային ապահովման իրականացման ծառայություններ	1	5132											101 670 000	101 670 000

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
900011028355
02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝
Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 38/1, 55շ.
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

1930042785480100
02588485
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Վ.Մերանգուլյան

(ստորագրություն)
Կ.Տ.